

ի Հայրապետութեան Տեառն Նահապետի Սրբազան Կաթողիկոսի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի: Եւ տպագրեցեալ ըստ խնդրոյ երկուց եղբարցն, Խորայէլին եւ Արրահամին, արդեամբ եւ ծախիւք իւրեանց, ի յգբօսանս Հայկազունեաց եւ ի յամի Փրկչին ՌէճՊին եւ Հայոց ՌՃԾԳ, ի մայրաքաղաքն Կ. Պոլիս:»

Մեծութիւն՝  $7 \times 11\frac{1}{2}$  սմ. էջ 1—232  
պատկերազարդ:

Ասոր յիշատակարանին մէջ (էջ 232) կ'ըսէ ինքն՝ «... Այլ եւ յիշեսջիք զսրբագրօղս այսմ բուրաստանիս զԵղոկիացի Սարգիս բանի սպասաւորս. որ եմ սարէթնի. եւ զորդեակն իմ զՍիմոնն, որ յոյժ հոգաբարձութեամբ սրբագրեցաք, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. Ամէն: Արդ եղեւ զըսւ սորայ թՎին Հայոց. ՌՃԾԳ. Մայիսի ի ԻԸ. ի մայրաքաղաքն Ստամպոլ ի թաղն Պէկ օղլի կոչեցեալ:»

Տարակոյս չկայ որ կաթողիկեայց տպարանէն այս միջոցներս լոյս տեսած ուրիշ շատ գրքերու մէջ Սարգիս մաս ունի, թէպէտ յիշատակարանին մէջ յիշուած չըլլայ:

Միեւնոյն 1704ին Սարգիս Եպ. ընդօրինակած է նաեւ ստուար ձեռագիր մը, որ Հռոմ կը գտնուի, եւ որմէ 1743ին կատարուած ընդօրինակութիւնը կը պահուի Անտ. Մատ. Օրթաքէոյ: Այս է՝

«Քրագր Մարգինոս (ի կարգէ Քարողոզացն). Գիրք պատմութեանց, որ կոչի ըստ Հայոց Գիրք գաւազանաց: Թարգմանեցի զայնս